

ԴՈՆԻ ԱՄԱՆՈՐՅԱ ՀԵՔԻԱԹԸ



Ռոստովի թիվ 19 գիմնազիայում տիրում էր ամանորյա աշխույժ մթնոլորտ: Հայոց լեզվի «Արևիկ» խմբակին (ուսուցչուհի Լուսինե Պետանյան) և «Հայաստանի փայլեր» պարային համույթին (գեղ. դեկավար Արմինե Օհանյան) հյուր էին եկել Ձմեռ պապն ու Չյունանուշը: Բնական է, որ երեխաներն իրենց ոռու դասընկերների հետ մասնակցում են տունական հանդեսներին, բայց այս մեկը յուրօրինակ էր այնքանով, որ այն բացարձակ հայկական ոգի ու շունչ էր կրում, Ձմեռ պապն ու Չյունանուշն էլ խոսում էին հայերեն: Նրանք իրենց հետ բերել էին նաև Չյունանուշիկի ընկերուհիներին փաթիլներին (ք. Ակսայի լրացուցիչ ուսումնական կենտրոնի հայոց լեզվի «Արարատ» խմբակի սաները, (ուսուցչուհի Լուսինե Պետանյան), որոնք էլ բոլորին հիացրին իրենց հիասքանչ պարով: Երեխաներն իրենց ուրախ ու զվարթ հայրենասիրական երգերով, պարերով ու ասմունքներով թնդացրին ծնողների հայրենիքի նկատմամբ առանց

այդ էլ կարոտով լցված սրտերը: Հիացմունք և գոհունակություն, սեր և կարոտ... զգացմունքները խառնվել էին իրար... Երբ Ձմեռ պապն ու Չյունանուշն էլ շուրջպար բռնեցին երեխաների հետ, միասին երգելով մեր ավանդական հայկական «Տոնածառ ջան տոնածառ», «Պատրաստել ենք մենք Նոր տարվա հանդես» երգերը, ոչ մեկն այլևս չկարողացավ թաքցնել հուզմունքը: Ամանորյա հայկական ոգին հասել էր նաև Ռոստովի հյուսիսային ծայրամաս ձայնային ստուդիա «Բիս», որտեղ իրենց պարապմունքներն են անցկացնում «Արփի» պարային համույթի սաները (գեղ. դեկավար Հրաչիկ Գևորգյան): Այս ստուդիայում անցկացվում են նաև հայոց լեզվի պարապմունքներ, որոնց հաճախում են նաև «Արփի»-ի սաները: Որոշեցինք այս անգամ տոնական օրվա բնույթը փոխել և այն վերածել բաց դասի: Թեման ընտրված էր. «Բնչպես են հնում հայերը տոնել Նոր տարին», իսկ ծնողները, ոչ

պակաս ոգևորությամբ, պատրաստ էին մասնակցելու: Եվ, ահա, լսարանի կենտրոնում մեր հին հայկական կենաց ծառն է իր ողջ գեղեցկությամբ: Երեխաները մեծ ոգևորությամբ և պատրաստում էին այն, և միաժամանակ պատմում էին նրա խորհին խորհրդի մասին: Պատմեցին նաև, թե էլ ինչպես են հայերը անվանել հնում Նոր տարին, ծանոթացան նաև Կաղանդ պապիկի հետ, վերջում էլ իրար մեջ բաժանեցին տարե-

ժանձակի հաճելի էր լսել այն, երբ ծնողներից շատերը որոշեցին Ամանորին իրենց օջախներում ևս կենաց ծառ պատրաստել: (Այս հոդվածում ես չեմ մանրամասնի կենաց ծառի, հին հայկական Նոր տարվա և Կաղանդ պապիկի խորհուրդը, բանի որ մեր թերթի նախորդ համարում այս ամենի մասին մանրամասն գրվել է): Պատմության ևս մի էջ կթերթվի, ևս մեկ տարի կմնա անցյալում՝ թողնելով



հացը: Ամբողջ տարին հաջողություն բերող միջինքն էլ բաժին հասավ չքնաղ Անգելինային: Օտոնների հուզմունքը կրկնապատկվեց, երբ առաջարկվեց կենաց ծառի վրայից ընտրել մեկական անակրնկալ ընկույզներ, որոնց մեջ երեխաները թաքցրել էին իրենց ամանորյա մաղթանքները հայերեն լեզվով գրված: Ա-

յան հաջողություններն ու անհաջողությունները, ուրախ ու տխուր պահերը, որ եղել են 2017 թվականին: Նոր տարին իր հետ կրերի նոր սպասումներ, նոր հույսեր ու երազանքներ: Եվ թող Ամանոր և Սուրբ Օտունը: Եվ թող միայն հաջողություններն ուղեկցեն հայ ժողովրդին այս նոր՝ 2018 թվականին:

Արմինե ՀՈՎՍԵԹՅԱՆ

Դոնի Ռոստովի թիվ 61 դպրոցի հայոց լեզվի «Անի» խմբակի սաներն ու ծնողներն Ամանորի միջոցառմանը (ուսուցչուհի Արմինե Հովսեփյան):



Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի Չայթը գյուղի թիվ 2 դպրոցի հայոց լեզվի խմբակի սաներն Ամանորին (ուսուցչուհի Հռիփսիմե Վարդևանյան):



ՆՈՐ ՏԱՐԻՆ ԹԻՎ 83 ԴՊՐՈՑԻ «ԱՐԵՎԻԿ» – ՈՒՍ



Դոնի Ռոստովի թիվ 83 դպրոցի «Արևիկ» խմբակի սաները յուրովի էին պատրաստվել Նոր տարվա հանդեսին: Երեխաների բարձր տրամադրությունը նպաստում էր, որպեսզի միջոցառումն անցնե՛ր շատ ուրախ ու տոնական մթնոլորտում: Մինչև հանդեսի սկսվելը ներկաներին բարձրախոսներով ողջունեցին պատանի լրագրողներ Դավիթն ու Լիզան: Նրանք իրենց հարցերով փորձում էին պարզել, թե օտարության մեջ ապրող հայերն ինչ ավանդույթներ են պահպանում, ինչ ճաշատեսակներ են պատրաստում Ամանորին, ինչպիսի մաղթանքներ են հնչում մեծերի կողմից և վերջապես, ինչ նվերներ է բերում սիրելի Ձմեռ պապը:

Այնուհետև ելույթ ունեցան խմբակի սաները: Նրանք իրենց ուսուցչուհու Սոնա Գարապետյանի ղեկավարությամբ բեմադրել էին Հովհանես Թումանյանի «Անհաղթ արքայր», երգ, պար, բանաստեղծություններ: Վերջում ներկաները դիմավորեցին ամենափոքրիկ մասնակցին չորսամյա Լեռին, ով ներս մտավ Ձմեռ պապի հագուստով, նվերների պարկով և ներկաներին բաժանեց Նոր տարվա նվերները:

Ամանորյա հանդեսին իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցին նաև մայրիկները, տատիկներն ու պապիկները:

* Դեկտեմբերի 28-ին Դոնի հայկական համայնքի ղեկավարությունը կրկին չէր խախտել երեխաներին Նոր տարվա հանդես պարզելու ամենամյա ավանդույթը: Այս անգամ բոլոր խմբակների հայ մանուկները հրավիրված էին մասնակցելու ամանորյա տոնական ներկայացում – հանդեսի: Ներկայացումն ուներ ուսուցողական, գեղարվեստական մեծ արժեք: Այդ տպավորությունը դեռ երկար կմնա ներկաների հիշողության մեջ:

